

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2018 թ-ի օգոստոսի 30-ին կայացած  
գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2018-19 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրատուրայի  
ընդունելություն;

2. Ուսումնական հարցեր.

ա/ ֆակուլտետի դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության մասին,

բ/ ավարտական և կուրսային աշխատանքների մասին,

գ/ բակալավրիատի նոր ուսումնական պլանների կազմման գործընթացը;

3. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունների քննարկում և  
առաջադրում;

4. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ 2018-19 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստատուրայի  
ընդունելության մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչներ՝ Ս.Զաքարյանը, Գ.Շահվերդյանը,  
Ն.Խաչատրյանը: Նշվեց, որ ֆակուլտետում ընդունելության արդյունքները գոհացուցիչ են,  
մագիստրատուրայի բոլոր մասնագիտացումները բացված են:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին՝ Ուսումնական տարբեր հարցերին վերաբերող տեղեկատվություն. դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության, մագիստրոսական թեզերի գնահատման նոր կարգի և բակալավրիատի նոր ուսումնական պլանների մասին:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության հարցը, մագիստրոսական թեզերի ընդդիմախոսության նոր կարգի, բակալավրիատի նոր ուսումնական պլանների կազմման գործընթացի մասին հարցերը:

Ամբիոնների վարիչները ներկայացրեցին իրենց ամբիոնային ծանրաբեռնվածությունը և նշեցին, որ ժամերի պակասման պատճառով փոփոխություններ կան:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունների մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց հավակնորդ ուսանողներին:

Որոշեցին՝ Ամբիոններում դնել քննարկման և ներկայացնել թեկնածություն:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2018 թվականի հոկտեմբերի 24-ին կայացած փիլիսոփայության և հոգեբանության  
ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Ուսումնական գործընթացներ / ընթացիկ քննությունների նախապատրաստական աշխատանքները , և կարգապահական հարցերը ֆակուլտետում/:
2. 2017-18 ուստարվա մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների հաստատման մասին / զեկ . ամբիոնի վարիչներ և ծրագրի ղեկավարներ/:
3. 2017-18 ուստարվա 2-րդ կիսամյակի սոց. հարցման արդյունքների ամփոփում:
4. Հաղորդում արտադրական պրակտիկայի մասին / զեկ . ԵՊՀ պրակտիկայի բաժնի ղեկավար Ա. Աթայան/:
5. «Ռազմական ծառայության հոգեբանական ուղեկցումը» ծրագրի հաստատումը /ՊՆ-ի համար/:
6. Մենագրության տպագրության երաշխավորության հարցը;
7. Ընթացիկ հարցեր:

Հաստատվեց օրակարգը:

1. Լսեցին ուսումնական գործընթացների, ընթացիկ քննությունների նախապատրաստման հարցերի մասին:

Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց, որ հարցաշարերը և նյութերը պատրաստ են, ամբիոնները դրանք կփոխանցեն ուսանողներին:

Դեկանը նշեց նաև, որ լավագույն ուսանող անվանակարգի մեկնարկը տրված է, ներկայացված են երեք ուսանողներ:

Որոշեցին՝ Ընդունելի գիտություն:

2. Լսեցին՝ 2017-18 ուստարվա մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաների ու ղեկավարների հաստատման մասին հարցը:

Ամբիոնների վարիչները, Ս.Զաքարյանը, Էդ.Հարությունյանը, Գ.Շահվերդյանը, Հր.Ավանեսյանը, Ա. Մանասյանը և այլք, ներկայացրեցին իրենց ամբիոններում կատարված աշխատանքի մասին տվյալ թեմայով, ծանոթացրեցին ամբիոնների ծրագրերին:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝ սոց. հարցման արդյունքների մասին հարցը:

Դեկան Ա.Բաղդասարյանը ներկայացրեց ուսանողների սոց.հարցումների արդյունքները, որոնք բաական բարձր էին: Այդ արդյունքները տեղադրված են համալսարանի կայքում:

Որոշեցին՝ ընդունել ի գիտություն:

4.Լսեցին՝ Արտադրական պրակտիկայի անցկացման մասին հարցը:

ԵՊՀ-ի պրակտիկայի ղեկավար Ա. Աթայանը ներկայացրեց համալսարանում տարվող աշխատանքները պրակտիկայի վերաբերյալ: Նա առաջարկեց, որ բելեր ամբիոնները ներկայացնեն այն բոլոր հաստատությունների անվանումները, որտեղ կցանկանան անցկացնել պրակտիկան, որպեսզի համալսարանը համապատասխան պայմանագրեր կնքի դրանց հետ:

Արտահայտվեցին ամբիոնի վարիչները:

Որոշեցին՝ Ամբիոններում քննարկել պրակտիկայի անցկացման վայրերն ու պայմանները և ներկայացնել Ա. Աթայանին:

5.Լսեցին՝ ՊՆ ներկայացվելիք ծրագրերի մասին հարցը:

Դեկան Ա.Բաղդասարյանը խորհրդի անդամներին ծանոթացրեց հոգեբանության ամբիոնների կողմից ներկայացրած բոլոր ծրագրերը ՊՆ-ի համար:

Արտահայտվեցին՝ Հր.Ավանեսյանը, Գ.Շահվերդյանը, Ն. Խաչատրյանը:

Որոշեցին՝ Հաստատել ամբիոնների կողմից ներկայացված ծրագրերը ՊՆ-ի համար:

6. Լսեցին՝ Մենագրության տպագրության երաշխավորության հարցը:

Արտահայտվեցին՝ պրոֆ. Հր.Ղազարյանը նշեց, որ Ս.Զաքարյանի մենագրությունը Հովհաննես Օձնեցու իմաստասիրության վերաբերյալ, քննարկվել և երաշխավորվել է ամբիոնի կողմից, կան այդ թեմայով հրատարակված հոդվածներ:

Որոշեցին՝ Ս.Զաքարյանի մենագրությունը երաշխավորել տպագրության:

7. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2018 թվականի դեկտեմբերի 6-ին կայացած փիլիսոփայության և հոգեբանության  
ֆակուլտետի ընդլայնված խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Դեկանի մեկ տարվա աշխատանքների հաշվետվությունը:

Նիստը նախագահող ընտրվեց դոց. Ն. Խաչատրյանը: Նիստին մասնակցում էր պրոռեկտոր  
Գևորգյանը:

Հաստատվեց օրակարգը, սահմանվեց կանոնակարգը:

Լսեցին՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց 2017-18 ուստարում ֆակուլտետում  
կատարված աշխատանքները: Նա նշեց, որ տարին լի էր կոնֆերանսներով, սեմինարներով:  
Դասախոսներն անցած կիսամյակում լավ ու լարված աշխատանք են կատարել, որի համար  
շնորհակալություն հայտնեց դեկանը:

Ֆակուլտետային աշխատանքներն իրականացվել են՝ համաձայն ԵՊՀ-ի  
ռազմավարական ծրագրի դրույթների, ռեկտորատի հրահանգների:

Դասախոսական անձնակազմը վերապատրաստվում է և համալսարանական , և  
միջազգային ծրագրերով: Երիտասարդ մասնագետները ներգրավվում են ֆակուլտետային  
կյանքին: Հաշվետու տարում տպագրվել է 11 մենագրություն, բազմաթիվ ուսումնական  
ձեռնարկներ և գիտական հոդվածներ: Դեկանը ներկայացրեց բոլոր ամբիոնների կատարած  
աշխատանքները հաշվետու տարում: Ուսանողները բավականին բարձր են գնահատել  
դեկանատի և դեկանի կատարած աշխատանքները:

Արտահայտվեցին՝ պրոֆեսորներ Ս. Զաքարյանը, Հր. Միրզոյանը, Գ. Շահվերդյանը,  
դոց. Հ. Հովհաննիսյանը, ուսանողական կառույցների ներկայացուցիչները:

Ելույթունեցողները դրական գնահատեցին դեկանի մեկ տարվա աշխատանքը, ինչպես նաև ներկայացրեցին որոշ հարցեր, որոնց լուծումներն ակնկալում են ռեկտորատից:

Ամփոփիչ ելույթ ունեցավ պրոռեկտոր Գևորգյանը և պատասխանեց բարձրացված հարցերին:

Որոշեցին՝ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի և դեկանի 2017-18 ուստարվա աշխատանքները համարել դրական:

Նիստի նախագահ՝ Ն.Խաչատրյան

Նիստի քարտուղար՝ Ս.Սարգսյան

#### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2018 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Ընտրություններ:
2. Ասպիրանտների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին՝ պրոֆ. Գ. Շահվերդյանին « Կլինիկական և սոցիալական հոգեբանության» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու երաշխավորման հարցը:

Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց, որ Գ. Շահվերդյանը ներկայացրել է բոլոր փաստաթղթերը, մրցութային հանձնաժողովը քննարկել և տվել է իր դրական եզրակացությունը:

Արտահայտվեցին՝ Հր. Միրզոյանը, Ս. Չաքարյանը, Դ. Գևորգյանը:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով. նախագահ Հր. Միրզոյան, անդամներ՝ Ի. Խանամիրյան և Մ. Ազիզյան, կազմով: Խորհրդի 31 անդամներից ներկա էին 25-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքները ներկայացրեց Հր. Միրզոյանը: Նա նշեց, որ 24 կողմ, 1 անվավեր, դեմ-0 ձայներով Գ. Շահվերդյանը ընտրվել է ամբիոնի վարիչի պաշտոնում:

Որոշեցին՝ Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

2. Լսեցին ասպիրանտների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը:

Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Անձի հոգեբանության ամբիոնի ասպիրանտ անի Գրիգորյանի ատենախոսության թեմայի և գիտակա ղեկավարի հաստատման հարցը:

Արտահայտվեցին՝ Ն. Խաչատրյանը, Գ. Շահվերդյանը, Հր. Միրզոյանը:

Որոշեցին՝ Հաստատել Անի Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Ն. Խաչատրյանին:

3. Ընթացիկ հարցեր:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան